

ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական
Հանրապետության կառավարության միջև

Նախաբան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իրանի
Իսլամական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
հաշվի առնելով առևտրական հարաբերությունների զարգացման
ու ամրապնդման գործում փոխադարձ շահարգողվածությունը և
ընդլայնելով ու զարգացնելով հավասարության, անխտրականության և
փոխշահավետության վրա հիմնված համագործակցությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի շրջանակները

Կողմերի միջև իրականացվող առևտրային փոխառաքումները,
երկու երկրների ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև կնքված
կոնտրակտները իրականացվում են սույն Համաձայնագրի
շրջանակներում և Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության
համապատասխան:

Հոդված 2

Վերաարտահանում երրորդ երկիր

Սույն Համաձայնագրի հիման վրա երկու Կողմերի միջև
փոխառաքվող ապրանքները կարող են վերաարտահանվել երրորդ
երկրներ արտահանող Կողմի թույլտվությամբ:

Հոդված 3

Ապրանքների ծագման սերտիֆիկատներ տալը

Կողմերից յուրաքանչյուրը, իր օրենսդրության համաձայն,
պատշաճ միջոցներ է ձեռնարկում մյուս Պայմանավորվող կողմ
արտահանվող ապրանքների ծագման սերտիֆիկատներ տալու համար:
Այս նպատակով Իրանում ամբողջությամբ արտադրված ապրանքները

համարվում են իրանական արտադրանքներ, Հայաստանում արտադրված ապրանքները՝ հայկական արտադրանքներ:

Հոդված 4 Մաքսատուրքեր և մաքսավճարներ

Կողմերը պայմանավորվում են, սույն Համաձայնագրի շրջանակներում և յուրաքանչյուր երկրի օրենսդրության համաձայն, բարենպաստ պայմաններ ստեղծել երկկողմ առևտրի զարգացման համար:

Պայմանավորվող կողմերից մեկի ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերը և մաքսավճարները չպետք է գերազանցեն այլ երկրների նմանօրինակ ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերին և մաքսավճարներին:

Հոդված 5 Արտոնություններ

Սույն Համաձայնագրով տրամադրված արտոնությունները չեն ներառում հետևյալը.

ա) արտոնություններ, որոնք Պայմանավորվող կողմերից մեկը տրամադրել է կամ կտրամադրի հարևան երկրին՝ սահմանամերձ առևտուրը հեշտացնելու նպատակով,

բ) արտոնություններ, որոնք տրամադրվել կամ կարող են տրամադրվել որևէ պետության ազատ առևտրի գոտում, մաքսային միություններում կամ ռեգիոնալ պայմանագրերում:

Հոդված 6 Հարկեր

Կողմերը համաձայնում են չկիրառել արտահանման և ներմուծման համար հարկերի, մաքսատուրքերի և այլ անհրաժեշտ զանձումների վերաբերյալ նոր և ավելի խիստ նորմատիվ ակտեր, բացառությամբ այն դեպքերի, երբ պահպանվում են հետևյալ պայմանները.

- այդ նորմատիվ ակտերը հրապարակվում և փոխանակվում են լիազորված մարմինների միջև,
- պաշտոնական տեղեկացումից հետո անցել է երեք ամիս,
- հարկերի և մաքսերի վերաբերյալ հայցերի նախնական պատրաստում:

Հոդված 7
Ոչ տարիֆային կարգավորում

Կողմերը, փոխադարձ առևտրային հարաբերություններ զարգացնելու նպատակով, համաձայնում են վերացնել ոչ տարիֆային արգելքները կամ փոխադարձաբար միմյանց տրամադրել ոչ տարիֆային արտոնություններ, համաձայն Հավելվածի, որը կհամաձայնեցվի Կողմերի միջև:

Հոդված 8
Տարադրամային վճարումների և գանձումների համակարգ

Սույն Համաձայնագրի իրականացումից բխող բոլոր գանձումները, վճարումները կկատարվեն Կողմերի միջև համաձայնեցված տարադրամով՝ Կողմերի կենտրոնական բանկերի միջև ստորագրված համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 9
Մասնակցություն տոնավաճառներին

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն իրենց առևտրային ընկերություններին և կազմակերպություններին մասնակցելու մյուս երկրում կազմակերպվող միջազգային կամ մասնագիտացված տոնավաճառներին և իրենց հնարավորությունների սահմաններում կօժանդակեն մյուս Կողմի առևտրային ընկերություններին և կազմակերպություններին:

Ցուցահանդեսի կամ տոնավաճառի նպատակով մի Պայմանավորվող կողմի տարածք մյուս Պայմանավորվող կողմի ներմուծած ապրանքներից մաքսատուրքերի, հարկերի և այլ վճարումների գանձումները կամ դրանցից ազատումը կատարվում են 1961 թվականի հունիսի 8-ին Բրյուսելում կնքված Ցուցահանդես-վաճառքների, հանդիպումների կամ նմանատիպ միջոցառումների համար ապրանքների ներմուծման համար արտոնությունների վերաբերյալ Կոնվենցիային համապատասխան:

Հոդված 10
Առևտրական ներկայացուցչությունների ստեղծումը

Կողմերի միջև ապրանքների, ծառայությունների և առևտրական տեղեկության փոխանակումը հեշտացնելու և զարգացնելու նպատակով Կողմերից յուրաքանչյուրը կթույլատրի իր տարածքում հիմնել առևտրական ներկայացուցչություն: Վերը նշված ներկայացուցչության աշխատողների, սարքավորումների և մասնաձյուղերի քանակը Կողմերի միջև կորոշվի առանձին համաձայնագրով:

Հոդված 11

Առևտրական հարաբերությունների ընդլայնում

Առևտրական հարաբերությունները զարգացնելու նպատակով Կողմերը կխրախուսեն իրենց ֆիզիկական և իրավաբանական անձանց գործելու միջազգային առևտրի կանոնների համաձայն, կխրախուսեն իրենց առևտրային պալատներին ավելի սերտ և արդյունավետ համագործակցելու, կփոխանակեն առևտրային պատվիրակություններ, կիրավիրեն մասնագիտացված սեմինարներ և կոնֆերանսներ:

Հոդված 12

Համատեղ հանձնաժողով

Կողմերը համաձայնում են ստեղծել իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողով, որը կգումարի նիստեր տարին մեկ անգամ՝ հաջորդաբար յուրաքանչյուր երկրի տարածքում: Հանձնաժողովի գործառույթ/պարտականություններն են՝

- ա) սույն Համաձայնագրի կատարման նկատմամբ վերահսկողություն,
- բ) սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացած դժվարությունների վերացման լուծումների մշակում,
- գ) երկկողմանի առևտրի զարգացման և ընդլայնման ուղիների վերանայում և ուսումնասիրություն:

Հոդված 13

Վեճերի կարգավորում

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի միջև ծագած վեճերը կլուծվեն բարեկամական բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով: Փոխհամաձայնության չհասնելու դեպքում վեճերը կլուծվեն արբիտրաժի միջոցով, որը կկազմվի երկու Կողմերի ներկայացուցիչներից՝ համաձայն Կողմերի օրենսդրության և միջազգային պրակտիկայում ընդունված կարգի:

Հոդված 14

Հանրային առողջության և ազգային շահերի պաշտպանություն

Սույն Համաձայնագրի դրույթները չեն սահմանափակում Պայմանավորվող կողմերի իրավունքները՝ սահմանելու արգելքներ կամ սահմանափակումներ ազգային շահերի, հանրային առողջության պաշտպանության և/կամ բույսերի կամ կենդանիների հիվանդությունների կանխման կապակցությամբ:

Հոդված 15

Համաձայնագրի գործողության ժամկետը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերի կատարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի փոխանակման օրվանից և կգործի հինգ տարվա ընթացքում: Այս ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագրի գործողությունը երկարացվում է 1 տարով, եթե Պայմանավորվող կողմերից մեկը նախօրոք, ոչ պակաս, քան 6 ամիս առաջ, մյուս Կողմին չի ծանուցում Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում նրա դրույթները կկիրառվեն Համաձայնագրի գործողության ժամանակահատվածում կնքված բոլոր պայմանագրերի նկատմամբ՝ մեկ տարի ժամկետով, եթե Կողմերը այլ բան չպայմանավորվեն:

Կատարված է Թեհրան քաղաքում՝ նախաբանով և 15 հոդվածով, 1995 թվականի մայիսի 6-ին, երեք լեզուներով՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն, երկուական բնօրինակով. բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 18-ից: